

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Խառատյանը
Հաստատել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի
թիվ 8 նիստի №25-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն..... 3
2. Համառոտ տեղեկություն..... 4
- Պատմական ակնարկ.....
3. Անտառաշեն համայնքի տեսլականը
4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն
5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն.....
6. Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն
7. Ռազմավարության սահմանում

1. Ներուծություն

Համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակում է համակնքապետի և նրա աշխատակազմի կողմից քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, դրվում է գործողության մեջ: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական, ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների (բնական, աշխարհգրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատել են նաև ֆինանսական ուսուրանորը և առաջարկված ծրագրերից ակնկալող արդյունքները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԼԿ

Լոռու մարզի Անտառաշեն համայնքը ստեղծվել է 1937 թվին Խորհրդ. միության կողմից ութեր փորձնական նպատակով բազմացրել են 25-30 արծաթափայլ աղվես, որը հետագայում հիմք է հանդիսացել Գազանաբուծական տնտեսության համար: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1900 մ. բարձրության վրա, շրջապատված է կանաչազարդ անտառներով, բարձրադիր լեռներով, լեռներից հոսող գետը հասնում է անմիջապես գյուղի ջրամբարը, որը բնակչությանը բավարարում է ամբողջությամբ: Գյուղի կլիմայական պայմանները բարենպաստ են. ձմեռը ցրտաշունչ իսկ ամառը զով: Ինչպես հանրապետության մյուս շրջաններում, այնպես էլ մեր մոտ վերջին տարիներին բնության անբարենպաստ պայմաններից տուժում է գյուղատնտեսությունը: Գյուղացիական տնտեսության զբաղմունքը՝ անասնապահությունն է ու հողագործությունը, իսկ նախկինում զբաղվել են գազանաբուծությամբ:

Կարևոր է նշել, որ երկար տարիներ զբաղվելով գազանաբուծությամբ տալով հանրապետությանը մեծ եկամուտներ: տնտեսությունը միակն է եղել նույնիսկ արտասահմանյան երկրներում ուր արտահանվել է ոսկեփայլ մորթի: Եթե 1937 թվին միությունը ունեցել է 25-30 գազան ապա 1988 թվին արտահանվել է 17000 կգաքիսի, 10000 աղվեսի մորթի պաշտպանելով մայրական կազմը: 1990թ. տնտեսությունը կանգնել է փլուզման եզրին, որը շարունակվեց մինչև 1994թ.-նը: Այդ օրվանից սկսած համայնքը զրկվել է գրեթե ամեն ինչից: Երբ ամենուր կատարվում է կատարվում էր սեփականաշնորհման գործընթացը, մեր համայնքում այն չիրականացավ: Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 31-ը հոկտեմբերի 1991 թ.-ի որոշման Անտառաշենը առանձնացվել է Լեռնոտովոյի գյուղական խորհրդից, դարձել ինքնուրույն: Համայնքի վարչական տարածքը 1043,27 հա. մշտական բնակչությունը 276 մարդ է, համայնքը չունի գազ դպրոց, բուժկետ: Մարդիկ զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Անտառաշեն համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները և բարերարների կարողությունները: Անհրաժեշտ է համայնքում ստեղծել երիտասարդ սերնդի համար մշակութային, սպորտային կենտրոններ, գյուղը զազաֆիկացնել: